

**ՎԱՐԿԱՆՇՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ\***

ՀՏԴ 336.7

DOI: 10.52063/25792652-2022.2.13-187

**ԱՆՆԱ ՀԱԿՈՔՉԱՆՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի  
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի  
կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ,  
«Շուկայագիտություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար,  
տնտեսագիտության թեկնածու,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[annahakobjan@ysu.am](mailto:annahakobjan@ysu.am)

**ՆԱՐԻՆԵ ՄԻՐՉՈՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի  
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի  
կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու,  
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[narinemirzoyan@ysu.am](mailto:narinemirzoyan@ysu.am)

Գիտական հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ-ում գործող առևտրային բանկերում փոխառուների վարկունակության գնահատման նպատակով կիրառվող վարկանշման մոդելների ընդհանուր դրույթները: Փոխառուների վարկանշումը որպես առևտրային բանկերում իրացվելիության ռիսկի գնահատման գործիք դառնում է արդիական: Նշված նպատակին հասնելու համար, ուսումնասիրվել և տեղեկություններ են հավաքագրվել հինգ առևտրային բանկերից: Ուսումնասիրվել են վերոնշյալ առևտրային բանկերի վարկանշման մոդելները, քանզի տրամադրվող վարկերի ծավալների մեծացման ֆոնին արդիական ու հրատապ է դառնում փոխառուների վարկանշումը: Փոխառուի վարկանիշը ամբողջությամբ պայմանավորում է բանկ-հաճախորդ համագործակցության պայմանները, ինչպես նաև նախանշում բանկի քաղաքականությունը տվյալ փոխառուի գծով գրավի ու սահմանաչափի կիրառման շրջանակներում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են գործոնային վերլուծության, համեմատության և վիճակագրական վերլուծությունների մեթոդները:

Կարելի է եզրակացնել, որ վերոնշյալ առևտրային բանկերի վարկանշման մոդելների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ յուրաքանչյուր առևտրային բանկ ունի իր անհատական վարկանշման մոդելը, որը, սակայն, ունի որոշակի թերություններ, որոնք մատնանշվել են հոդվածում: Կարևորվում է նաև այն, որ առևտրային բանկերը ներքին վարկանիշ շնորհելու նպատակով վերլուծում են ինչպես ֆինանսական, այնպես էլ կառավարչական հաշվետվությունները, ինչն առավել իրատեսական է դարձնում շնորհված վարկանիշը:

\* Հոդվածը ներկայացվել է 19.06.2022թ., գրախոսվել՝ 01.07.2022թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2022թ.:


**Հիմնաբառեր՝** վարկանշում, իրացվելիության ռիսկ, Կենտրոնական բանկ, առևտրային բանկ, վերաֆինանսավորման տոկոսադրույք, փոխառուների վարկունակություն:

**Ներածություն**

Վերջին տարիներին առաջ եկած աշխարհաքաղաքական գլոբալ խնդիրները, այդ թվում՝ համավարակը, պատերազմները, որոնց արդյունքում եղան սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում, փոխարժեքի տատանումներ, վարկային ռեսուրսների թանկացում և այլն, անդրադարձել են նաև ՀՀ-ի վրա: 2020 թվականի պատերազմը հանգեցրեց ինչպես բարոյահոգեբանական ճգնաժամի, այնպես էլ ֆինանսական ռեսուրսների մեծ կորուստների: Հասարակության մեջ ձևավորվեցին բացասական սպասումներ, ինչն էլ ավելի էր խորացնում տնտեսության վայրէջքը: Իրավիճակը բարդանում էր նաև աշխարհը բոլորած համավարակի պատճառով, ինչը նվազեցրել էր տնտեսական ակտիվությունը աշխարհի բոլոր երկրներում, բայց հատկապես այն ազդել էր փոքր, զարգացող երկրների վրա: Վերոնշյալի համատեքստում առանցքային կարևորություն ունեւր ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը, որը պայմանավորված էր ՀՀ ԿԲ-ի իրավիճակին համարժեք արձագանքելու կարողությամբ, վերջինիս կողմից Բազելյան կոմիտեի համաձայնագրերին հետևելով, մասնավորապես ռիսկերի կառավարման մասով, որոնց շրջանակներում կապիտալի համարժեքության և այլ նորմատիվները այնքան բարձրացվեցին, որ հնարավոր էր դիմակայել էլ ավելի մեծ փորձությունների, բացի այդ ՀՀ ԿԲ-ն հմուտ օգտագործում է իր մակրոպրոլեկցիալ գործիքները՝ մասնավորապես կապիտալի հակացիկլիկ բուֆերը, որը 2022 թվականի առաջին կիսամյակում ևս սահմանվեց 0% (Մակրոպրոլեկցիալ քաղաքականության հայեցակարգ, 05.06.2022, www.cba.am)<sup>1</sup>:


**Խնդրի գործնական վերլուծությունը**

Վերը նկարագրված բարդ իրավիճակը համալրվեց 2022 թվականի փետրվարին սկսված ՌԴ-ի հատուկ գործողությամբ Ուկրաինայում, ինչի արդյունքում առաջ եկավ և դեռևս շարունակվում են փոխարժեքի տատանումները: Ռուսական ռուբլին մի քանի օրվա ընթացքում գրանցեց իր պատմական ամենացածր արժեքը (Գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. Ռուբլու փոխարժեքի դինամիկան<sup>2</sup>**


<sup>1</sup> Մակրոպրոլեկցիալ քաղաքականության հայեցակարգ, [https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy\\_int.aspx](https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int.aspx), Accessed 5 June 2022  
<sup>2</sup> Փոխարժեքների արխիվ, <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>, Accessed 5 June 2022



**Գծապատկեր 2. Եվրոյի և դոլարի փոխարժեքների դինամիկան<sup>1</sup>**

Վերոնշյալը խուճապ առաջացրեց օտար փոխարժեքի տնօրինողների շրջանում, ինչպես նաև բացասական ազդեց ՅՅ-ի արտահանման ծավալների վրա: Սակայն կարճ ժամանակում ՌԴ կառավարության քայլերի արդյունքում, մասնավորապես վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման միջոցով՝ շուրջ 15 տոկոս (Գծապատկեր 3), հնարավոր եղավ փոքր թանկացնելով որոշ չափով կարգավորել ինֆլյացիայի անկառավարելի տեմպերը:

Վերը թվարկածը որոշ չափով կայունացրեց ռուբլին նաև ՅՅ-ում, ինչը շատ կարևոր էր ՅՅ-ի համար, քանի որ բնակչության որոշակի տոկոս դեռ մեծ կախվածություն ունի ՌԴ-ից եկող տրանսֆերտներից:



**Գծապատկեր 3. ՅՅ և ՌԴ վերաֆինանսավորման տոկոսադրույքների դինամիկան<sup>1</sup>**

<sup>1</sup> Փոխարժեքների արխիվ, <https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>, Accessed 5 June 2022

Ինչպես արդեն նշվեց, վերը նկարագրված իրավիճակին և՛ ՀՀ, և՛ ՌԴ ԿԲ-երը արձագանքեցին վերաֆինանսավորման տոկոսադրույքի գործիքը լայնորեն կիրառելով: Երկու երկրներում էլ բարձրացավ վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչը համապատասխանաբար բարձրացրեց առևտրային բանկերի կողմից տրվող վարկերի տոկոսադրույքները, որոնք ձևավորվում են հետևյալ բանաձևի հիման վրա՝

$$S_{\text{վո}} = S_{\text{բ}} + S_{\text{շ}} + S_{\text{նվ}} \quad (1) \quad (\text{Գրիգորյան և Միրզոյան})$$

որտեղ՝

$S_{\text{վո}}$  - վարկային ռեսուրսի տոկոսադրույք

$S_{\text{բ}}$  - բազային տոկոսադրույք

$S_{\text{շ}}$  - շահույթի տոկոսադրույք

$S_{\text{նվ}}$  - ռիսկի վճարի տոկոսադրույք (հավելյալ տոկոսադրույք):

Նշված բանաձևի բազային՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման հաշվին բարձրացվեցին առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, ինչը պատերազմի և համավարակի արդյունքում առաջացած սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետ մեկտեղ առանցքային պատճառներից են չաշխատող վարկերի տեսակարար կշռի բարձրացման մեջ: Առևտրային բանկը առանձին վերցված չի կարող ազդել ո՛չ վերաֆինանսավորման տոկոսադրույքի, ո՛չ էլ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա, այն ընդամենը այդ ռիսկերից բխող հետևանքների կրողն է: Մասնավորապես, վերոնշյալ պայմանները հանգեցնում են փոխառու և՛ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց շրջանում վարկի սպասարկման խնդիրների, արդյունքում ավելանում են չաշխատող վարկերը և առևտրային բանկերի մոտ իրացվելիության ռիսկ է առաջանում: Դեպքերի հաջորդականության նշված շղթայի մեջ առևտրային բանկերը իրենց իրացվելիությունը և վճարունակությունը պահպանելու համար պետք է ավելի լուրջ մոտենան իրենց մոտ կիրառվող վարկանշման մոդելների իրատեսությանը և անընդհատ հարմարեցնեն վերջիններիս հանդեպ կիրառվող պահանջները արտաքին միջավայրին:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում գործող և փոխառուների վարկունակության գնահատման համար վարկանշման մոդել կիրառող առևտրային բանկերի վարկանշման մոդելների ընդհանուր դրույթները: Սույն հոդվածի շրջանակներում առևտրային բանկերում կիրառվող վարկանշման մոդելները ուսումնասիրելով, թերությունները բացահայտելով և մոդելներն ամբողջականացնելու առաջարկությունները ներկայացնելով՝ փորձ է արվել նվազեցնել առևտրային բանկերում վարկային ռիսկի շրջանակներում ծագող իրացվելիության ռիսկը:

Ինչպես արդեն նշվեց, տրամադրվող վարկերի ծավալների մեծացման ֆոնին արդիական է փոխառուների վարկանշումը: Փոխառուի վարկանիշն ամբողջությամբ պայմանավորում է բանկի՝ վերջինիս հետ համագործակցության պայմանները, ինչպես նաև նախանշում բանկի քաղաքականությունը տվյալ փոխառուի գծով գրավի ու սահմանաչափի կիրառման շրջանակներում:

Վարկանշման ծածկույթը դեռևս շատ փոքր է ՀՀ-ում՝ պայմանավորված միջազգային վարկանշման գործակալությունների կողմից վարկանշման բարձր գներով և առաջ քաշվող խիստ պահանջներով: Բացի այդ, միջազգային վարկանշման գործակալությունների կողմից վարկանշումը հետապնդում է մի շարք այլ նպատակներ՝ օտարերկրյա վարկերի ներգրավում, բորսայական առևտրի մասնակցություն և այլն: Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում բորսան թերևս զարգացած չէ, ինչպես նաև օտարերկրյա վարկերի ներգրավման սուր կարիք առևտրային կազմակերպությունները չունեն զարգացած ֆինանսական համակարգի պայմաններում: Ըստ այդմ, ՀՀ-ում միջազգային վարկանշման գործակալությունների՝

<sup>1</sup> Ключевая ставка [https://www.cbr.ru/hd\\_base/KeyRate/](https://www.cbr.ru/hd_base/KeyRate/), Accessed 5 June 2022

մասնավորապես Moody's-ի կողմից տրված արտաքին վարկանիշ ունեն միայն որոշ առևտրային բանկեր:

Վերոնշյալը էլ ավելի է հիմնավորում ներքին՝ կոնստրագենտ առևտրային բանկի կողմից շտրիվոլ վարկանիշի իրատեսության անհրաժեշտությունը:

ՀՀ ֆինանսական համակարգը գտնվում է կայուն զարգացման փուլում, դրա մասին են խոսում վերջին մի քանի տարիներին տեղի ունեցած արհավիրքների պարագայում մասնավորապես առևտրային բանկերի շրջանում սնանկությունների բացակայությունը և կարևոր ֆինանսական ցուցանիշների բարելավումը: Իհարկե, նման կայունության երաշխավորն ու ապահովողը՝ իր ճիշտ մակրոտնտեսական քաղաքականության գործիքների կիրառմամբ, ՀՀ ԿԲ-ն է: ՀՀ ԿԲ-ն հետևում և կիրառում է Բազելյան համաձայնագրերում արձանագրված խորհուրդ-պահանջները: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ դեռևս Բազելյան երրորդ համաձայնագրում առկա էր պահանջ, որ յուրաքանչյուր առևտրային բանկ պետք է ունենա իր սեփական ներքին վարկանշման համակարգը, այն դեռևս լիովին բավարարված չէ: Սույն հոդվածի շրջանակներում դիտարկվել են ՀՀ բոլոր 17 առևտրային բանկերը, և ընտրվել այն բանկերը (բանկային գաղտնիքի առկայության պարագայում դիտարկվող բանկերի անվանումները չեն հրապարակվում), որոնք ունեն մշակված համապարփակ վարկանշման մոդել, այլ ոչ թե վարկունակության գնահատման առանձնացված փոքր քանակի ռանդոմ ցուցանիշներ:

Նշված նպատակին հասնելու համար ուսումնասիրվել և տեղեկություններ են հավաքագրվել հինգ առևտրային բանկերից<sup>1</sup>:

Ուսումնասիրված առևտրային բանկերում, ինչպես կարգն է, վարկանշման մոդելները անցել են վալիդացման շրջան, որի ընթացքում շտկվել և համալրվել են նոր արտաքին մարտահրավերներին համապատասխան: Վերոնշյալներում վարկանշման մոդելները ենթարկվում են տարեկան մոնիթորինգի, և վարկանշման գործընթացի վերանայման համար սովորաբար պատասխանատու են լինում հետևյալ ստորաբաժանումները՝ Ռիսկերի վարչություն, Վարկերի մոնիթորինգի բաժին, Ֆինանսական վերլուծությունների բաժին և այլն: Ինչպես արդեն նշվել է, վերլուծված յուրաքանչյուր առևտրային բանկ ունի իր սեփական վարկանշման մոդելը, որը բավարարում է իր ռիսկ-ախորժակին: Սակայն յուրաքանչյուր մոդել ունի իր ռիսկը այն առումով, որ կարող է ոչ իրատեսական վարկանիշ շտրիվել փոխառուներին: Առևտրային բանկերը իրենց վարկանշման մոդելների շրջանակներում շտրիվում են փոխառուներին ներքին վարկանիշ, սակայն արտաքին վարկանիշի առկայությունը դյուրինացնում է վարկանշման գործընթացը, քանզի միջազգային վարկանշային գործակալությունների (Moody's, Fitch և S&P) կողմից շտրիված վարկանիշները վստահելի են և ընդունվում են ամբողջ աշխարհում:

Վերլուծված առևտրային բանկերում ելակետային վարկանիշի գնահատումը հիմնվում է քանակական և փորձագիտական (ֆինանսական և ոչ ֆինանսական) գործոնների գնահատականների վրա՝ օգտագործելով տարբեր կշիռներ: Գրականության մեջ առկա մոդելներում հեղինակներն առաջարկում են վարկանիշը շտրիվելիս ավելի մեծ տեսակարար կշիռ տալ քանակական գործոններին, քանզի դրանց հաշվարկը բացառում է փորձագետի սուբյեկտիվությունը (Маталова и Маталов): Սակայն մեր կողմից ուսումնասիրված առևտրային բանկերից երեքը գերադասել են քանակականին տալ 0,4, իսկ փորձագիտականին՝ 0,6 կշիռը, իսկ մնացած երկու բանկերը՝ 0,5 քանակականին և 0,5 փորձագիտականին: Վարկանիշի շտրիվման գործընթացում բոլոր հինգ առևտրային բանկերում ընդհանուր միավորների քանակը 100 է:

<sup>1</sup> Զանի որ վարկանշման մոդելները հանդիսանում են յուրաքանչյուր առևտրային բանկի գաղտնիք, տվյալները տրամադրվել են առևտրային բանկերի անվանումները չներկայացնելու պայմանով:

Ուսումնասիրված բոլոր հինգ առևտրային բանկերը ոչ ֆինանսական գործունեության առանձնացրել են վարկային պատմությունը, որն իր մեջ ներառում է ինչպես տվյալ բանկի հետ ունեցած վարկային պատմությունը, այնպես էլ մնացածների հետ շուկայում զբաղեցրած դիրքը, ինչի տակ նկատի են ունեցել փոխառուի գործունեության ոլորտում ունեցած տեսակարար կշիռը, կառավարման որակը, համբավը և այլն: Նշված հինգ բանկերում էլ թվարկած ոչ ֆինանսական գործունեությունը էին հավասար կշիռներ:

Քանակական գործոնների գնահատման համար առևտրային բանկերը ընդհանուր առմամբ ընտրել են հետևյալ ցուցանիշները (Աղյուսակ 1.):

**Աղյուսակ 1. Ուսումնասիրված առևտրային բանկերում կիրառվող վարկանշման մոդելների շրջանակներում հաշվարկվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները<sup>1</sup>**

<b>Ֆինանսական ցուցանիշներ</b>	<b>Կշիռ<sup>2</sup></b>
Կախվածության գործակից	
Ֆինանսական ռիսկի գործակից	
Իրացման շահութաբերություն՝ Չուտ շահույթ/ հասույթ	
Չուտ շահույթով վարկային մարումների ծածկման գործակից	
Ընդհանուր իրացվելիություն	
Ընթացիկ իրացվելիություն	
Հասույթի աճ	
Եկամտաբերության շեմ	
Ակտիվների շրջանառելիություն	
<b>Ոչ ֆինանսական ցուցանիշներ</b>	
Վարկային պատմություն	
Համբավի վերլուծություն	
Կառավարման օղակներում գտնվող անձանց փոփոխության հաճախականություն	
Բանկի հետ հարաբերություններ	
Մատակարարների դիվերսիֆիկացիա	
Ոլորտի ներուժ	
Գործունեության ժամկետ և ծավալ	
Մրցակցային միջավայր	
<b>Ընդամենը</b>	<b>100.0%</b>

Վերոնշյալ յուրաքանչյուր գործոն, թույլատրելի միջակայքում լինելու պարագայում իր կշռից ելնելով, շնորհում է փոխառուին բալեր: Փոխառուի կողմից հավաքագրված բալերի ընդհանուր գումարը համապատասխանեցվում է վարկանիշին հետևյալ սկզբունքով (Աղյուսակ 2.):

<sup>1</sup> Կազմվել է հեղինակների կողմից:

<sup>2</sup> Յուրաքանչյուր առևտրային բանկ ինքն է որոշում նշված գործոնի կարևորությունը, կախված իր ներքին վարկանշման մոդելից:

**Աղյուսակ 2. Կազմակերպության հավաքած միավորների և դրանց համապատասխանեցված վարկանիշերի սանդղակ<sup>1</sup>**

Միավորներ	Վարկանիշ 2 (Moody's)	Վարկանիշ (Fitch)	Կորստի հավանականություն և PD	Ռիսկի որակ	Նկարագրություն
0% - 20%	Caa3	CCC-	80%	Անընդունելի Ռիսկ	Կասկածելի
21% - 39%	Caa2	CCC	50%	Անընդունելի Ռիսկ	Ստանդարտ ից քիչ
40% - 50%	Caa1	CCC+	27.08%	Անընդունելի Ռիսկ <sup>2</sup> Ընդունելի ռիսկ <sup>3</sup>	Անբավարար
51% - 59%	B3	B-	6.49%	Բարձր Ռիսկ	Բավարար
60% - 70%	B2	B	3.20%	Ընդունելի Ռիսկ	Ընդունելի
71% - 84%	B1	B+	1.98%	Միջին Ռիսկ	Նորմալ
85% - 90%	Ba3	BB-	0.91%	Ցածր Ռիսկ	Լավ
90% - 95%	Ba3	BB-	0.91%	Ցածր Ռիսկ	Լավ
95% - 100%	Ba3	BB-	0.91%	Ցածր Ռիսկ	Լավ

### Եզրակացություն

Հարկ է նշել, որ նույնիսկ 100% միավոր հավաքելու դեպքում ՀՀ-ում վարկանշվող կազմակերպությունը չի կարող A կարգի վարկանիշ ստանալ: Զանգի կազմակերպության վարկանիշը չի կարող ավելի բարձր լինել, քան այն երկրի վարկանիշը, որտեղ այն գործում է:

Վերոհիշյալ հինգ առևտրային բանկերի վարկանշման մոդելների վերլուծությունը ցույց տվեց, որ, իհարկե, յուրաքանչյուր առևտրային բանկ պետք է ունենա իր անհատական վարկանշման մոդելը, ինչպես խորհուրդ է տալիս Բազելյան կոմիտեն, քանի որ տարբեր է յուրաքանչյուրի ռիսկ-ախորժակը, յուրաքանչյուրն ունի իր տեսլականը, թե որ ֆինանսական կամ ոչ ֆինանսական ցուցանիշներն են առավելագույնս բնութագրում կազմակերպության վիճակը, նույնիսկ նման ցուցանիշներ օգտագործելիս յուրաքանչյուրը տարբեր կարևորության կշիռ է հաղորդում ցուցանիշին և այլն: Այդուհանդերձ, կան նաև նմանություններ. մասնավորապես, բոլոր առևտրային բանկերը վարկանշման մոդելի մեջ ներգրավում են կազմակերպության իրացվելիության, գործարար ակտիվության, շահութաբերության և ֆինանսական կայունության ցուցանիշները:

Վերլուծությունը ցույց տվեց, որ բանկերը ներքին վարկանիշ շնորհելու նպատակով վերլուծում են ինչպես ֆինանսական, այնպես էլ կառավարչական հաշվետվությունները, ինչն ավելի իրատեսական է դարձնում շնորհված վարկանիշը, և ևս մեկ անգամ հիմնավորվում է «Բանկային գաղտնիք» հասկացության պահպանման անհրաժեշտությունը:

<sup>1</sup> Կազմվել է հեղինակների կողմից:

<sup>2</sup> Վերլուծվող 4 բանկերում ռիսկի որակը դասակարգվել էր անընդունելի, մեկ բանկում՝ ընդունելի:

<sup>3</sup> Վերլուծվող 4 բանկերում ռիսկի որակը դասակարգվել էր միջին, մեկ բանկում՝ ցածր:

Այնուամենայնիվ, մեր կողմից վերլուծված առևտրային բանկերի վարկանշման մոդելներում առկա էին մի շարք բացթողումներ. մասնավորապես, չէին վերլուծվում կազմակերպություններին բնորոշ ռիսկերը, և վերջիններս չէին ներգրավվում վերջնական բալային գնահատականի որոշման գործընթացում: Հստակ չէր, թե ինչպես են կազմակերպությունները առևտրային անցած փոխառուների առևտրական եզրակացությունները հաշվի առնում վարկանիշի շտրիման ժամանակ, բավականին սեղմ էր վերլուծվող ցուցանիշների շրջանակը՝ հատկապես գործարար ակտիվության վերլուծության կտրվածքով և այլն:

Կազմակերպությունների վարկանշումը վերջիններիս միջև վստահության դաշտի ստեղծման առանցքային, ժամանակակից գործիք է, և առևտրային բանկերում կիրառվող վարկանշման մոդելների կատարելագործումը բանկային համակարգի կայունության և, առանձին վերցրած, առևտրային բանկի իրացվելիության ռիսկի կառավարման ամենաազդեցիկ գործիքն է:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան, Լիանա և Նարինե Միրզոյան. *Կազմակերպությունների ֆինանսական վերլուծություն և վարկանշում*. Տնտեսագետ, Երևան, 2018:
2. Alexander, Carol, and Elizabeth Sheedy. *The Professional risk managers' handbook: a comprehensive guide to current theory and best practice*. PRIMA risk management series, New York, 2005.
3. Basel Committee on Banking Supervision. *International Convergence of Capital Measurement and Capital Standards*. Basel, 2005.
4. Вяткин, Валерий, и Владимир Гамза. *Базельский процесс, Базел II – управление банковскими рисками*. Москва, 2007.
5. Шаталова, Елена, и Александр Шаталов. *Оценка кредитоспособности заемщиков в банковском риск-менеджменте*. КНОРУС, Москва, 2011.
6. Փոխարժեքների արխիվ,  
<https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>, Accessed 5 June 2022
7. Մակրոպրոլեկցիալ քաղաքականության հայեցակարգ, 05.06.2022,  
[https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy\\_int.aspx](https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int.aspx)
8. Ключевая ставка [https://www.cbr.ru/hd\\_base/KeyRate/](https://www.cbr.ru/hd_base/KeyRate/), Accessed 5 June 2022

### WORKS CITED

1. Alexander, Carol, and Elizabeth Sheedy. *The Professional Risk Managers' Handbook: a Comprehensive Guide to Current Theory and Best Practice*. PRIMA Risk Management Series, New York, 2005.
2. Basel Committee on Banking Supervision. *International Convergence of Capital Measurement and Capital Standards*. Basel, 2005.
3. Grigoryan, Liana ev Narine Mirzoyan. *Kazmakerput'yunneri finansakan verluts'ut'yun ev varkanshum*. Tntesaget, Erevan. [*Financial Analysis of Organizations and Rating*. Economist, Yerevan] 2018. (In Armenian)
4. Vjatkin, Valerij, i Vladimir Gamza. *Bazel'skij process, Bazel II – upravlenie bankovskimi riskami*. Moskva. [*Basel Process, Basel II - Management of Banking Risks*. Moscow] 2007. (In Russian)
5. Shatalova, Elena, i Aleksandr Shatalov. *Ocenka kreditosposobnosti zaemshnikov v bankovskom risk-menedzhmente*. KNORUS, Moskva. [*Assessment of Creditworthiness of Borrowers in Bank Risk Management*. KNORUS, Moscow] 2011. (In Russian)
6. Փոխարժեքների արխիվ,  
<https://www.cba.am/am/SitePages/ExchangeArchive.aspx>, Accessed 5 June 2022



7. Մակրոպրուդենցիալ քաղաքականության հայեցակարգ, [The concept of macroprudential policy] [https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy\\_int.aspx](https://www.cba.am/am/SitePages/fsmacropolicy_int.aspx), Accessed 5 June 2022

8. Ключевая ставка, [Key rate] [https://www.cbr.ru/hd\\_base/KeyRate/](https://www.cbr.ru/hd_base/KeyRate/), Accessed 5 June 2022.

## **RATING AS A LIQUIDITY RISK MANAGEMENT TOOL IN THE FINANCIAL SYSTEM**

**ANNA HAKOBYAN**

*Yerevan State University,  
Faculty of Economics and Management,  
Chair of Management and Business,  
Ph.D. in Economics, Associate Professor,  
Head of Marketing Master's Degree Program  
Yerevan, the Republic of Armenia*

**NARINE MIRZOYAN**

*Yerevan State University,  
Faculty of Economics and Management,  
Chair of Management and Business,  
Ph.D. in Economics, Associate Professor,  
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the scientific article is to examine the general provisions of borrowers' creditworthiness assessment models of commercial banks in the Republic of Armenia. In the framework of this, borrower's ratings are becoming more popular as a method for assessing liquidity risk in commercial banks. To achieve this goal the necessary data from five commercial banks in RA was gathered and studied.

As borrowers' ratings are becoming increasingly important due to the growth of provided loans, the rating models of the above-mentioned commercial banks were studied and analyzed.

The borrower's rating fully determines the terms of cooperation between the bank and the client, as well as outlines the bank's policy within the framework of the application of the mortgage's and its limits.

During the research the methods of factor analysis, comparison, and statistical analysis were applied.

It can be concluded that the analysis of the above models of ratings of commercial banks showed that each commercial bank has its own individual rating model, which, however, has certain disadvantages, which were discussed in the article. It is also important that commercial banks analyze both financial and management reports in order to assign an internal rating, which makes the latter more realistic.

**Keywords:** *Rating, Liquidity Risk, Central Bank, Commercial Bank, Refinancing Rate, Borrowers' Creditworthiness.*

## РЕЙТИНГОВАНИЕ КАК ИНСТРУМЕНТ УПРАВЛЕНИЯ РИСКОМ ЛИКВИДНОСТИ В ФИНАНСОВОЙ СИСТЕМЕ

**АННА АКОПДЖАНЫ**

*руководитель магистерской программы «Маркетинг»,  
доцент кафедры управления и бизнеса факультета экономики и  
управления Ереванского государственного университета,  
кандидат экономических наук,  
г. Ереван, Республика Армения*

**НАРИНЕ МИРЗОЯН**

*доцент кафедры управления и бизнеса  
факультета экономики и управления  
Ереванского государственного университета,  
кандидат экономических наук,  
г. Ереван, Республика Армения*

Целью научной статьи является исследование общих положений рейтинговых моделей, применяемых для оценки кредитоспособности заемщиков в коммерческих банках РА. Рейтингование заемщиков как инструмент оценки риска ликвидности становится очень актуальным. Для достижения цели проанализированы и исследованы данные пяти коммерческих банков. Были исследованы рейтинговые модели вышеупомянутых коммерческих банков, поскольку на фоне увеличения объемов предоставляемых кредитов рейтингование заемщиков становится все более актуально и неотложно. От рейтинга заемщика полностью зависят условия сотрудничества банка и заемщика, они также обуславливают политику банка в отношении применения ссуды и лимита кредита.

В исследовании были применены факторный анализ, методы сравнения и статистического анализа.

Вследствии анализа данных рейтинговых моделей вышеупомянутых коммерческих банков стало ясно, что каждый коммерческий банк имеет свою рейтинговую модель, которая имеет недостатки, выявленные в статье. Важно также отметить, что коммерческие банки с целью присуждения внутреннего рейтинга анализируют как финансовую, так и управленческую отчетность, что делает присужденный рейтинг более достоверным.

**Ключевые слова:** *рейтингование, риск ликвидности, Центральный банк, коммерческий банк, ключевая ставка, кредитоспособность заемщика.*